



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ա. Ս. Խ. Հ. Լուսավորության Ժողովրդական  
Կոմիսարիատ

---

---

# ԻՐԱԳՈՐԾԵՆՔ

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՍԻ

1932 թ. ոգոսոսի 25-ի

ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

(Նյութեր գեղարվեստների համար)

37  
—  
Ա-Ձ 1

ԱԶՆՐՆԵՇՐ—1932

57  
Ա-Ձ/ Գրություններ բոլոր յերկրների, միացեք.

Մ Ա. Ս. Խ. Հ. Լուսավորության Ժողովրդական  
Կոմիսարիատ

**ԻՐԱԳՈՐԾԵՆՔ**  
**ՎԵԿԱՊԵՒ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ**  
1932 թ. ոգոսոսի 25-ի  
**ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ**  
**ՎՈՐՈՇՈՒՄԸ**

(Նյութեր զեկուցողների համար)

ԱԶԵՐՆԵՇՐ—1932

18 SEP 2013

44 411

1 MAR 2010

Թարգմանիչ Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ,  
Ցեխ. խմբագիր—Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ



1522  
38

Baş Mətbuat Mədirliji. Məvəkkili 6304. ADN 381.  
Sifariş 920. Tiraż 3000.

Вакъ, Болшож-Морској вѣ Қрасно-Пресненски кы-  
çәләрин тининдә № 16/36.  
Azərnəşr mətbəəsində basıldı.

# ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Կոմունիստական կուսակցության ծրագրի կիրառման ճանապարհով ընթանալով, վորի համաձայն «Իպրոցը պետք է վոչ միայն կոմունիզմի սկզբունքների անցկացնողը լինի ընդհանրապես, այլև պրոլետարիատի զաղափարական կաղմակերպչական և դաստիարակչական ազդեցության տարածողը՝ աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և վոչ պրոլետարական խավերի վրա— վերջնականապես կոմունիզմը հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպատակով» (ՎեկԱՊԵ-ի (բ) ծրագիր), պրոլետարական պետությունը հակայական հաջողություններ է ձեռք բերել դպրոցական ցանցի ընդարձակման և դպրոցների վերակառուց-

ման բնագավառում: Տարրական և միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը 1914 թվականի 7,800 հազար հոգուց 1931 թվականին հասավ 20 միլիոնի: Արմատական կերպով փոխվել է դպրոցների սոցիալական կազմը: Բանվորների և գյուղի աշխատավոր լայն մասսաների յերեխաները, վորոնք առաջ հնարավորություն չունեյին դպրոցում սովորելու, այժմ դպրոցի հիմնական կոնտինգենտն են հանդիսանում: Մայրենի լեզվով ուսուցումը ընդգրկել է Խորհրդային Միության կուլտուրայես ամենահետամնաց ժողովուրդներին և տարվում է 70 լեզվով:

Սկզբունքորեն փոխվել է դպրոցի ամբողջ աշխատանքի բովանդակությունը:

Խորհրդային դպրոցը, վորի նպատակն է «կոմունիստական հասարակության համար պատրաստել բազմակողմանի զարգացած անդամներ», յերեխաներին տալիս է անհամեմատ ավելի լայն հասարակական քաղաքական շրջհայացողություն և ընդհանուր զարգացում, քան նախահեղափոխական և բուրժուական դպրոցը: Վերջին տարիներում բարձրացել է խորհրդային դպրոցի յերեխաների ընդհանուր կրթության մակարդակը:

Դպրոցն առանձնապես նշանակալի նվաճումներ կատարեց կուսակցության 16-րդ համագումարի ընդհանուր պարտադիր ուսման մասին հանած պատմական վորոշումից հետո: Միայն այս վերջին տարվա ընթացքում սովորողների թիվը տարրական և միջնակարգ դպրոցներում 13,5 միլիոնից հասավ 20 միլիոնի: Բացի այդ Ֆարգործուսներում և տեխնիկումներում ընդգրկվեցին 1,400 հազար սովորողներ:

Դպրոցական հասակի յերեխաների պարտադիր ուսման իրականացման վճռական քայլերի հետ միասին դպրոցը զգալի չափերով առաջ է անցել դպրոցական ուսման և արտադրական ու հասարակական աշխատանքի միջև կապ ստեղծելու գործում, վորի շնորհիվ զբված են արդեն զպրոցի վերակառուցման հիմքերը պոլիտեխնիզմի բազայի վրա:

Արհեստանոցների քանակի ավելացումը, թեպետ թվով անբավարար և տեխնիկայես դեռևս թույլ սարքավորված, և դրա հետ զուգակցված դպրոցները գործարաններին, սովխոզներին, մեքենատրակտորային կայաններին, կոլխոզներին ամրացնելը հնարավորություն է տալիս ավելի ու ավելի

լայն ծավալել և արագորէն իրականացնել  
դպրոցի պոլիտեխնիկացիան:

Սակայն չնայած այդ բոլոր նվաճումնե-  
րին Կենտկոմը մատնանշում է, վոր խորհրդա-  
յին դպրոցը ղեռնս հեռու է այն հակայական  
պահանջները բավարարելուց, վոր առաջա-  
գրում է նրան սոցիալիստական շինարարու-  
թյան ներկա ետապը: Կենտկոմը գտնում  
է, վոր դպրոցի արևասական քերությունը  
ներկա մոմենտում կայանում է նրանում,  
վոր ուսուցումը դպրոցում բավարար ծավա-  
լով հանրակրթական գիտելիքներ չի տալիս  
և անբավարար է լուծում տեխնիկումների  
ու բարձրագույն դպրոցի համար լիովին  
պրագետ մարդիկ պատրաստելու խնդիրը,  
վորոնք լավ տիրապետելին գիտությունների  
հիմունքներին (Ֆիզիկա, քիմիա, մաթեմա-  
տիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն  
և այլն:): Այդ պատճառով դպրոցի պոլիտեխ-  
նիկացիան մի շարք ղեկավարում ձեվական  
բնույթ է ստանում և յերեխաներին իբրև  
սոցիալիզմի բազմակողմանի զարգացած շի-  
նարարներ չի պատրաստում, վորոնք կարո-  
ղանային կապակցել թեորիան պրակտիկայի  
հետ և տիրապետել տեխնիկային:

Իպրոցի պոլիտեխնիկացումը գիտու-  
թյունների, մանավանդ ֆիզիկայի, քիմիայի

ու մաթեմատիկայի սխտեմատիկ հաստա  
տուն յուրացումից անջատելու ամեն մի  
փորձ, վորոնց դասավանդումը պետք է կա-  
տարվի խստիվ սահմանված և խնամքով մշա-  
կված ծրագրերի և ուսումնական պլանների  
հիման վրա խստիվ վորոշված դասացուցակ-  
ներով,—վոչ այլ ինչ է, յեթե վոչ պոլիտեխ-  
նիկական դպրոցի գաղափարի ամենակո-  
պիտ աղավաղում: «Կոմունիստ կարելի է  
դառնալ միայն այն ժամանակ, յերբ կհա-  
րատացնես հիշողությունդ այն բոլոր գիտե-  
լիքներով, վոր մշակել է մարդկությունը»  
(Լենին 25-րդ հատոր 388 էջ):

Իպրոցի հետագա ամբողջ աշխատանքի  
հիմքում Կենտկոմը առաջարկում է դնել  
Լենինի այն ցուցմունքները, վոր տվել է  
նա դեռևս 1920 թ:

Ընդգծելով, վոր չի կարելի պոլիտեխնի-  
կացման հարցերը դնել վերացականորեն և,  
վոր այդ հարցերը պետք է լուծել կուսակ-  
ցության առաջ կանգնած կոնկրետ խնդի-  
րների հետ սերտորեն կապված, Լենինը  
մատնանշում է <sup>1)</sup>, վոր անհրաժեշտ է.

<sup>1)</sup> Լենինի դիտողությունները Ն. Կրուպսկայայի  
պոլիտեխնիկական կրթության վերաբերյալ թիզի-  
ների մասին:

1) Խուսափել վաղ մասնազխտացումից, այդ մասին մշակել հրահանգ:

2) Բոլոր պրոֆեսիոնիկական դպրոցներում ընդարձակել հանրակրթական առարկաները:

3. Անպայման ինդիլը դնել անհապադորեն պոլիտեխնիկական կրթության անցնելը, կամ ավելի ճիշտ պոլիտեխնիկական կրթության ուղղութեամբ անհապադորեն կիրառել այժմ իսկ մատչելի մի շարք քայլեր:

Մեզ հարկավոր են ատաղձագործներ, փականագործներ իսկույն և յետ: Անպայման: Բոլորը պետք է ատաղձագործներ, փականագործներ և այլն դառնան, բայց զրան ավելացնելով հանրակրթական պոլիտեխնիկական միջնոճումը:

Յերկրորդ ատաղձանի դպրոցների (12—18 տ.), ավելի ճիշտ յերկրորդ ատաղձանի բարձր խմբակների խնդիրն է՝ տալ իր գործը լիովին լմացող, վարպետ դառնալու միանգամայն ընդունակ, պատրաստ փոխարինելու այդ գործի համար պրակտիկ կերպով պատրաստված ատաղձագործին, հյուանին, փականագործին և այլն, սակայն այն պայմանով, վոր այդ «արհեստավորն» ունենա լայն ընդհանուր կրթություն և (լմանա), այսինչ ու այնինչ դիտություններին հի-

մունքների միջնոճումը (ճշտիվ մատնանշել ինչ գիտություններին), լինի կոմունիստ (վորոշակի ասել, թե ինչ պետք է իմանա), ունենա պոլիտեխնիկական շրջանայացողություն և իմանա իսկական պոլիտեխնիկական կրթության տարերքն ու հիմունքները: Այն է.—

ա) Հիմնական հասկացողություններ ելեքտրականության մասին (ճշտիվ վարոշել ինչ հասկացողություններ).

բ) Ելեքտրականության կիրառումը՝ մեխանիկական արդյունաբերության մեջ.

գ) Նույնը՝ քիմիականի ասպարեզում

դ) Նույնը՝ Խորհրդային Ռուսաստանի կլեքտրիֆիկացիայի պլանի մասին.

ե) 1—3 անգամից վոչ պակաս այցելի ելեքտրակայան, գործարան, սովխոզ.

զ) Իմանալ դյուղատնտեսության այսինչ հիմունքները և այլն, մշակել մանր ամասնորեն գիտելիքների միջնոճումը:

Այս բոլորից յեխնելով ՎՆԿԱՊԵ-ի (բ) կենտկոմը վորոշում է.

### 1. ԳՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Առաջարկել միութենական հանրապետությունների լուսժողկոմաաններին ամմի-

Ղապես կազմակերպել ծրագրերի գիտական — մարքսիստական մշակում, նրանց մեջ ապահովելով սխառե հավորված գիտելիքների ճշարիվ սահմանված շարքը (մայրինի լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն) այն հաշվով, վոր 1932 թվի հունվարի 1-ին դասավանդումը սկսվի վերանայված ծրագրերով:

Ծրագրերը վերանայելու հետ միասին, լուսժողովատուր պետք է ձեռք առնի մի շարք միջոցներ, վորոնք ապահովեն նոր ծրագրերով դասավանդելու խսկական հնարավորությունը (ուսուցիչների հրահանգումն, համապատասխան ցուցմունքները հրատարակում և այլն):

Խորհրդային դպրոցում ուսուցման դանազան նոր մեթոդներ կիրառելով, վորոնք կարող են նպաստել սոցիալիստական շինարարությանը նախաձեռնող, գործունյա մասնազետներ դաստիարակելու խնդրին, միաժամանակ անհրաժեշտ և վճռական պայքար ծավալել թեթևամիտ մեթոդական պրոժեկտորության դեմ, գործնականում նախորդ չստուգված մեթոդների մասսայական գործադրման, մի հանգամանք, վոր առանձնապես ցայտուն կերպով յերևան յեկավ վերջին ժամանակներս, այսպես կոչված «պրո-

յեկանների մեթոդի» կիրառման ընթացքում: «Էպրոցի մանացման» հակայնինյան թեորիայից բղտող, այսպես կոչված «պրոյեկտների» մեթոդը դպրոցական ամբողջ աշխատանքի հիմքը դարձնելու փորձերը փաստորեն տանում են դեպի դպրոցի կործանումը:

Կենտկումը պարտավորեցնում է միութեական հանրապետությունների լուսժողովատաներին, անմիջապես կազմակերպել և պատշաճ բարձրության վրա դնել գիտական — հետազոտական աշխատանքը, այդ աշխատանքի համար գործի կանչել լավագույն կուսակցական ուժերին և վերակառուցել այն լրակատար մարքսիստական-լենինյան հիմունքներով:

Յիլնելով այն հանգամանքից, վոր պոլիտեխնիկական կրթությունը կոմունիստական դաստիարակության բաղկացուցիչ մասն է կազմում, վորը պետք է սովորողներին տա «գիտությունների հիմունքները, ծանոթացնի նրանց «թեորիայում և պրակտիկայում արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին», կիրառի «ուսման սերտ կապն արտադրական աշխատանքի հետ», — առաջարկել միութեական հանրապետությունների լուսժողովատաներին 1931 թ. ընթացքում լայն-



որին ծավալել զպրոցներին կից արհեստա-  
նոցների և աշխատանքային սենյակների  
ցանցը, կապակցելով այդ գործը՝ պայմանա-  
գրերի հիման վրա՝ զպրոցները ձեռնար-  
կաթյուններին, սովխոզներին և կոլխոզնե-  
րին ամբացնելու գործի հետ: Ուսուցման  
միացումը արտադրական աշխատանքի հետ  
անհրաժեշտ և կատարել այնպիսի հիմունք-  
ներով, վորպեսզի սովորողների ամբողջ  
հասարակական արտադրական աշխատանքը  
յկնթարկված լինի զպրոցի կրթական ու  
դաստիարակչական նպատակներին:

Ձեռնարկներին, սովխոզներին, Մ.Տ.Կ. և  
կոլխոզներին առաջարկվում և լուսժողկոմա-  
տներին ամեն կերպ ոգնել այս խնդիրը  
լուծելու, առանձնացնելով զպրոցական ար-  
հեստանոցների և լաբարատորիաների հա-  
մար անհրաժեշտ սարքավորում ու գործիք-  
ներ, առանձնացնելով նաև վտրակյալ բան-  
վորներ ու մասնագետներ, վորոնք անմիջա-  
պես պետք և մասնակցեն զպրոցի աշխա-  
տանքին, մանկավարժներին արտագրության  
ուսումնասիրության գործում ուղնելուն և  
այլն:

Միութենական հանրապետությունների  
լուսժողկոմատներին առաջարկվում և յուրա-  
քանչյուր շրջանում և բոլոր քաղաքներում

ստեղծել որինակելի զպրոցների ցանց, այդ  
զպրոցներն ավելի բարենպաստ նյութական  
պայմանների մեջ դնելով և կենտրոնացնե-  
լով այդտեղ լավագույն մանկավարժական ու-  
ժերն այն հաշվով, վոր ուսուցչական մասսա-  
ները, բանվորները, կոլխոզնիկները և սովո-  
րողները կարողանան գործնականում սովո-  
րել այդ զպրոցներում պոլիտեխնիկական  
զպրոցների շինարարությունը:

Դպրոցի պոլիտեխնիկացմանը նպաստե-  
լու նպատակով միութենական հանրապե-  
տութուններին առաջարկվում և 1931-1932  
ուսումնական տարում ստեղծել պոլիտեխ-  
նիկական թանգարանների փոքրիկ ցանց,  
ինչպես և գոյություն ունեցող գավառագի-  
տական թանգարաններին կից՝ հատուկ  
պոլիտեխնիկական բաժիններ: Ժ.Տ.Գ.Պ.-ին  
առաջարկվում և Ֆինանսական և կազմա-  
կերպչական աջակցություն ցույց տալ այդ  
միջոցառումը կիրառելու համար: Լուսժող-  
կոմատները, պետհատների հետ միասին  
աշակերտների և մանկավարժների համար  
մայրենի լեզվով պետք և տիպային պոլիտե-  
տեխնիկական գրադարաններ ստեղծեն: Լուս  
ժողկոմատներին առաջարկվում և կինո  
կազմակերպություններին հետ միասին մի-  
ջոցառումներ մշակել՝ ոգտագործելով կինոն

դպրոցի, մտնավանդ պոլիտեխնիզացիայի համար:

Սոցիալիզմի շրջանում, յերբ պրոլետարիատը սրված դասակարգային պայքարի պայմաններում իրականացնում է դասակարգերի վերջնական վոչնչացումը, խորհրդային դպրոցում բացառիկ կարևոր նշանակություն է ստանում կայուն կոմունիստական դաստիարակությունը և պայքարի ուժեղացումը ընդդեմ ամեն տեսակ այն փորձերի, վորոնք նպատակ կունենան խորհրդային դպրոցի յերեխաներին պատվաստելու հակապրոլետարական իդիոլոգիայի տարրեր:

Սրա հետ միասին հենտկոմն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին ամրացնել դպրոցների ղեկավարությունը և անմիջական հսկողություն տակ առնել հասարակական-քաղաքական դիտքի պլիններին դասավանդումը յոթնամյակներում, մանկավարժական տեխնիկոմներում և մանկավարժական ԲՈՒՀ-երում:

Ընդգծելով պարտուսի մասին հենտկոմի 1930 թվի հուլիսի 25-ի վորոշումը սահմանված ժամկետին իրականացնելու անհրաժեշտությունը, հենտրոնական կոմիտեն կուսակցական ծրագրի պահանջները՝ մինչև 17

տարեկան բոլոր յերեխաների և դեռահասների ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության մասին շուտափույթ կերպով իրականացնելու նպատակով, առաջարկում է Սորհրդային Միության Ժողկոմխորհին մշակել ընդհանուր պարտադիր յարակա կրթության ծրագիր:

## 2. ԴՊՐՈՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մատնանշելով ժողկրթության որդաններում դպրոցի մեթոդական ղեկավարություն կազմակերպության և կադրերի անբավարար վիճակը, հենտկոմն առաջարկում է կուլտպրոպին՝ լուսժողկոմատներին և ողջային կոմկուսներին կենտկոմներին կուլտպրոպներին հետ միասին մի ամսվա ընթացքում միջոցառումներ մշակել ժողկրթության որդաններում մեթոդական աշխատանքի համար մարքսիստական-լենինյան կադրեր պատրաստելու համար և մեթոդական ղեկավարություն ղեկավարչական ողակներն ամրացնել լավագույն մանկավարժական և թեորետիկ ուժերով:

Մատնանշելով մանկավարժության բնագավառում գիտական-հետազոտական հիմնարկություններին բավականաչափ կտրած

լինելը դպրոցի պրակտիկ խնդիրներէց, Վեհմ.ՊԵ-ի (բ) կենտրոնը առաջարկում է միութենական հանրապետություններէ լուս-ժողովրդատններին համապատասխան հետազոտական աշխատանքը կենտրոնացնել, գլխավորապէս դպրոցի պրակտիկ աշխատակիցների կուտակած փորձի, մանավանդ պոլիտեխնիկացման բնագոյառում, ուսումնասիրման և ընդհանրացման վրա:

Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողովրդատններին, վորպեսզի սկսած ուսյոնական ողակներէց, ժողովրդական կրթության որգաններէ սխտեմի մեջ մտցնել հրահանգիչների ինստիտուտ, ուսուցչին իր ամենորյա դպրոցական աշխատանքի մեջ մշտական ու գործնական ոգնություն ցույց տալու համար: Հրահանգիչների կազմի մեջ ընդունել փորձված՝ դպրոցն ու նրա խնդիրները լայլ հասկացող ուսուցիչներին, տալով յուրաքանչյուր ուսյոնին առնվազն յերկու հրահանգիչ:

Պարտավորացնել ժողովրդական կըրթության ասպարիզում ղեկավարչական աշխատանք տանող բոլոր կոմունիստներին՝ ամենակարճ ժամանակամիջոցում տիրապետել դպրոցական աշխատանքի մեթոդական կողմին:

Կոմունիստական ակադեմիային կից մարքսիստ մանկավարժներ ընկերության առաջ խնդիր դնել՝ Լուսժողովրդատն առաջադրությունների համաձայն՝ ուսուցչին իր ամենորյա աշխատանքում ցույց տրվելիք մեթոդական ոգնության հիմնական հարցերը մշակելու:

Վերանայել մանկավարժական հարցերին նվիրված գոյություն ունեցող պարբերական հրատարակությունները, նպատակ ունենալով նրանց վորակի վճռական բարելավումը և շրջադարձը՝ յերեսը ղեպի դպրոց և ղեպի նրա պահանջները, պարտավորաբար խմբագրական ապարատի մեջ գրավելով ուսուցիչներին:

### 3. ԿԱԴՐԵՐ

Ուսուցիչների մեջ տարվելիք աշխատանքների ընթացքում ղեկավարվել այն ցուցմունքով, վոր տվել է Լենինը դեռևս 1922 թվին՝ «ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է այնպիսի բարձրության վրա նա յերբեք չի յեղել, չկա և չի կարող լինել բուրժուական հասարակության մեջ» (Լենին, հատոր 18, մաս 2-րդ, էջ 115): Պարտուաի իրականացման առնչությամբ մանկավարժական կազ-

լերի պահանջի աճումն և նրանց վորակի բարձրացումը հաշվի առնելով, առաջարկել Սորհրդային Միության Պետպլանին և միութենական հանրապետությունների լուսժողովոմատներին յերկու ամսվա ընթացքում կազմել մանկավարժական կադրերի պատրաստման պլանը, այնպես վոր լիովին ապահովվի տարրական և միջնակարգ դպրոցի համար ուսուցիչների պահանջի բավարարումը և այդ պլանը տալ Սորհրդային Միության Ժողկոմխորհին հաստատելու:

Կազմակերպել ուսուցիչներին արտադրություն հիմունքների հետ ծանոթացնելու գործը գործարաններում, սովխոզներում Մ. Տ. Կ. և կոլխոզներում այն հաշվով, վորպեսզի 1931-32 տարվա ընթացքում այդ ծանոթացումը ընդգրկի մանկավարժական բոլոր կադրերը:

Սորհրդային Միության Հողժողովոմատին առաջարկել գյուղատնտեսներ պատրաստման ուսումնական հիմնարկները կոնտինգենտը վորոշելիս հաշվի առնել կոլյերիս դպրոցների պահանջը, ինչպես և ոգնել ժողովրդական կրթության որդաններին արտադրության մեջ զբաղված ագրոնոմիական ուժերը կոլյերիս դպրոցներում աշխատանքի քաշելու գործում:

Քալոր ինդուստրիալ և գյուղատնտեսական բարձրագույն դպրոցներում մտցնել դպրոցի պոլիտեխնիկացման աշխատանքի մեթոդների և արտադրական տեխնիկական ուսուցման գործի ծանոթացումը:

Առաջարկել Համ. Լենկոմյերիտմիություն կենտկոմին և միութենական հանրապետությունների լուսժողովոմատներին՝ մշակել հատուկ միջոցառումներ պիոներ ղեկավարներ ընտրելու, նրանց աշխատանքին ամբացնելու, նրանց ընդհանուր և հատուկ մանկավարժական վորակը բարձրացնելու համար, համարելով նրանց մանկավարժական նոր կադրեր պատրաստելու բեղերվ:

Հանձնարարել Պետպլանին, Ֆինոդկոմատին, Լուսաշխի կենտկոմին և միութենական հանրապետությունների լուսժողովոմատներին՝ տասն որվա ժամանակաընթացքում մշակել միջոցառումներ տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցչություն աշխատավարձի բարձրացման համար:

Լուսաշխի միության կենտկոմին միութենական հանրապետությունների լուսժողովոմատներին միասին, մի ամսվա ընթացքում մշակել ուսուցիչների աշխատանքի դիֆերենցիալ վարձատրման սիս-

տե՛մը ըստ ռայոնների, կվալիֆիկացիայի և աշխատանքի վորակի: Ուսուցիչներին մըթերքներ և արդյունաբերական ապրանքներ մատակարարելը պետք է կատարել հետևյալ կարգով. քաղաքներում և արդյունաբերական ռայոններում նրանց բանվորական փակ բաշխիչներին և ճաշարաններին կցելու միջոցով և արդյունաբերական բանվորներին նորմաներով: Կոլխոզներում ուսուցիչներին պարեն-սթերքներ մատակարարել կոլխոզների պարենավորման ֆոնդերից՝ տվյալ ռայոնի արդյունաբերական բանվորներին նորմաներով: Գյուղական ուսուցիչներին արդյունաբերական ապրանքներ և արդյունաբերական արտադրության մթերքներինչպես և թերևս կոլխոզ չունեցող գյուղերում ուսուցիչներին պարեն մթերքներ մատակարարել կենտրոնացված մատակարարման ֆոնդերից՝ տվյալ ռայոնի արդյունաբերական բանվորներին նորմաներով:

Ուսուցչության մեջ տարվող բոլոր աշխատանքների մեջ լայնորեն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը, ամեն կերպ խրախուսելով հարվածային ուսուցիչներին:

#### 4. ՏԱՐԲԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Մատնանշելով, վոր դպրոցների նյութական բազան՝ նոր շենքերի կառուցումը, յեղածների վերանորոգումը, դպրոցական սարքավորման և ուսումնական պիտույքների արտադրությունը վերին աստիճանի անբավարար է, և դպրոցի աշխատանքի բարելավման խոչնդոտներից մեկն է հանգիստանում, Կենտկոմն առաջարկում է Միութենական Պետպլանին, մշակել դպրոցական շինարարության հնգամյա պլանը: Պարտադիր համարել բոլոր նոր կառուցումների մեջ դպրոցական շինարարությունն ավարտել մինչև ձեռնարկության աշխատանքների սկսվելը:

Դպրոցական շենքերի ֆոնդի ընդլայնման նպատակով Կենտկոմն առաջարկում է տեղերի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին ապահովել մինչև այժմ չբահանձնված դպրոցական նախկին շենքերի հանձնումն և կուլակներից գրավված տների ոգտագործումը դպրոցների համար:

Անհրաժեշտ է կոլխոզների նախաձեռնությունն ու միջոցները լայնորեն գրավել

դպրոցի նյութական բազայի և ուսուցչու-  
թյան ապահովման բարելավման գործին:

Առաջարկվում է ժողանտխորհին՝ ստեղ-  
ծել ուսումնական պիտույքներ պատրաստող  
համամիութենական արդյունաբերական մի-  
ացություն, յերկու ամսվա ընթացքում այդ  
միացության արտադրական պլանը քննել,  
այն հաշվով, վոր 1932 թվին թե տարրական  
և թե միջնակարգ դպրոցների հիմնական  
մասսան մատակարարված լինի ուսումնա-  
կան սարքավորման միևնույնում:

Առաջարկել միութենական հանրապետու-  
թյունների լուսժողկոմատներին մի ամսվա  
ընթացքում մշակել ուսումնական պիտույք-  
ների և պոլիտեխնիկական սարքավորման  
ստանդարտների և համապատասխան հայտ  
ների կայացնել ժողանտգերխորհին:

Առաջարկել միութենական ժողանտգեր-  
խորհին դպրոցներին հանձնել, ձեռնարկու-  
թյունների համար անոգտագործելի և դպրո-  
ցական արհեստանոցների աշխատանքի սեն-  
յակներին պիտանի ստանոկները, գործիք-  
ներն ու զանազան միացորդները (խոտանք-  
ները, կտորտանքներն ու փշրանքները):

Առաջարկել միութենական հանրապե-  
տություններին ժողկոմխորհներին, յերկրային  
և շրջանային գործկոմներին և արդկոտպե-

րացիայի որդաններին, կարճ ժամանակամի-  
ջոցում տեղերում կազմակերպել մասսայու-  
կան դպրոցի ուսումնական սարքավորման  
ու պիտույքների արտադրությունը, այդ  
նպատակով որտադրծելով տեղական մի-  
ջոցները:

## 5. ԳՊՐՈՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասնանշելով միութենական հանրապե-  
տություն. լուսժողկոմատների վերջին տա-  
րիներում ձեռք բերված հաջողություններն  
իրենց ամբողջ կազմակերպչական աշխա-  
տանքի վերակառուցման ասպարեզում, կու-  
սակցության կենսկոմն ընդգծում է, վոր  
դպրոցի աշխատանքի վորակի բարելավումն  
անհնար է առանց դպրոցի ղեկավարության  
վորակի վճռական բարձրացման լուսժող-  
կոմատի որդանների կողմից և անհապա-  
ղորեն ղեպի նրանց կոնկրետ—ոպերատիվ  
և դիֆերենցիալ ղեկավարության անցնելը,  
ըստ վորում պետք է հաշիվի առնել առան-  
ձին շրջաններին, ռայոնների տնտեսական,  
քաղաքական նշանակությունը, ազգային  
առանձնահատկությունները և այլն, և սահ-  
մանել ժողկրթության բոլոր ողակներում  
դիմադրկությանը բացասող խիստ պատաս-

խանատվութիւնն հանձնարարված աշխատանքի համար: Կենտկոմը պահանջում է ժողովրդական կրթութեան բոլոր մարմիններին նոր ձևի աշխատանք ու ղեկավարութիւն, վորը պետք է համաձայնեցված լինի աճած այն պահանջներին, վոր դպրոցի առաջ դնում է սոցիալիստական վերակառուցումը:

Կենտկոմն առաջարկում է միութենական հանրապետութիւններին լուսժողովմատներին վճռաբար վերակառուցել ժողկրթութեան մարմինների ղեկավարութեան պրակտիկան, դարձնելով այդ ղեկավարութիւնն իսկական ոպերատիվ ու դիֆերենցիալ ղեկավարութիւն, ուշադրութիւնը կենտրոնացնելով արդյունաբերական կարևորագույն ուսյոնների (մետաղ, ածուխ, նավթ և այլն), սովխոզներին, ՄՏԿ-ների, համատարած կոլլեկտիվացման ուսյոնների և նոր շինարարութիւնների վրա: Անհրաժեշտ է վերացնել «հավասարարական» մոտեցումը դեպի ուժերի և միջոցների բախշումը, կենտրոնացնելով դրանց ամենից առաջ սոցիալիստական շինարարութեան առաջատար ճակատամասերում:

Միութենական հանրապետութիւնների լուսժողովմատներին առաջարկվում է ապա-

հովել դպրոցի միանձնյա կառավարման իրագործումը: Պրոֆմիութենական կազմակերպութիւններին առաջարկվում է ժողովրդական կրթութեան որպաններին այդ գործում անհրաժեշտ ոգնութիւնն ցույց տալ:

Միութենական հանրապետութիւնների լուսժողովմատները, սովորողներին պրակտիկ ոգնութիւն կազմակերպելով, միաժամանակ պետք է բարձրացնեն ուսուցիչներին պատասխանատվութիւնը դպրոցական աշխատանքի վորակի համար, ուշադրութեան առարկա դարձնելով ու խրախուսելով նվիրված և իրենց գործն իմացող ուսուցիչներին:

Տեղեխանների ինքնավարութեան որպանների աշխատանքը դպրոցում դնել այնպես, վորպեսզի գլխավորապես ձգտի բարձրացնել ուսուցման վորակը և ամրացնել գիտակցական կարգապահութիւնը դպրոցում:

Կենտկոմը գտնում է, վոր այս վորոշման կրգմից առաջադրված խնդիրների հաջող իրականացման համար, միութենական հանրապետութիւնների լուսժողովմատները պետք է իրենց որպաններում վճռական պայքար մղեն այն տարրերի դեմ, վորոնք դիմադրում են այս վորոշման մեջ նշված ուղղութեամբ դպրոցի աշխատանքների մեջ շրջա-

դարձ կատարելու և ուսուցման վորակը բարձրացնելու փոխարեն, կամ տարվում են «ձախ» ֆրակներով, կամ ել հետ են քաշում դեպի բուրժուական դպրոցը:

Կենտկոմն ընդգծում է դպրոցի աճող նշանակութունն ու դերը սոցիալիստական շինարարության մեջ: Կենտկոմն առաջարկում է բոլոր կազմակերպութուններին՝ սխտեմատիկ անշեղ պայքար մղել դպրոցական աշխատանքի ասպարեզում կուսակցական քաղաքականության ոպորտունիստական աղավաղումների դեմ: Պոլիտեխնիկ դպրոցի կառուցման ճանապարհին գլխավոր վտանգ հանդիսացող՝ կուսակցության աջ ոպորտունիստական աղավաղումների դեմ հաջող պայքարելը, — աղավաղումներ, վորոնք տանում են դեպի դպրոցի հրաժարումը պոլիտեխնիկացումից, դեպի հին դպրոցի պահպանման վորձերը, դեպի խզումն թեորետիկ ուսուցման և պրակտիկայի մեջ, — լենիթադրում է պայքարի ուժեղացումը ընդդեմ «ձախ» ոպորտունիստական աղավաղումների, ընդդեմ «դպրոցի մահացման» և ուսուցչի դերի իջեցման թեորիաների:

Կենտկոմը բոլոր կուսակցական կազմակերպությունների ուղադրությունը հրավի-

րում է այն հոնդամանքի վրա, վոր ահրաժեշտ է վճռաբար ուժեղացնել ուղադրությունը դեպի մասսայական դպրոցը, ուսուցչի աշխատանքը և դպրոցի ամենորյա կոնկրետ ղեկավարության ամրացումը:

ՎԵԿԱՊԵ-ի (բ) ԿԵՆՏԿՈՄ



# ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՍԻ

1932 թ. ոգոսսուի 25-ի

## ՎՈՐՈՇՈՒՄԸ

**ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԳՊՐՈՑԻ**

**ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՅԵՎ**

**ՈՆԺԻՄԻ ՄԱՍԻՆ**

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԸ հաստատում է, վոր Խորհրդային Ռուսաստանում վերջին տարին տարրական ու միջնակարգ դպրոցների բնագավառում ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու և ուսուցման վորոշակի պլանների, ծրագրերի ու դասացուցակների հիման վրա գիտությունները սխտեմատիկ կերպով յուրացնելուն անցնելու հետ կապված նշանավոր տեղաշարժեր են կատարվել: Սակայն մինչև վերջը զեռ չի վերացված դպրոցի արմատական թերությունը, վորն կայանում է նրանում, վոր «դպրոցի ուսուցումը հանրակրթական գիտելիքների գոհացուցիչ ծավալը չի տալիս և անբավարար է լուծում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների համար

լիովին գրադետ, գիտության հիմունքների (Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն) լավ տիրապետող մարդիկ նախապատրաստելու խնդիրը» (ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը): Դրա կարևորագույն պատճառներն են՝ ծրագրերի թերությունները (մանավանդ 5, 6 և 7 խմբակի 2-րդ կոնցենտրի համար), դպրոցական աշխատանքի մեթոդների անբավարարությունը, մեթոդական ղեկավարության թուլությունը լուսժողովատաների և նրանց տեղական որգանների կողմից, զբաղում թույլ գիտելիքներն, իսկ յերբեմն ամեն տեսակի գիտելիքներն և կարգի բացակայությունը:

Պետք է նշել նաև, դպրոցական սխտեմի տարբեր ողակների միջև կապի բացակայությունը, վորի հետևանքով տարրական ու միջնակարգ դպրոցները վոչ ավարտողների կոնտինգենտով, վոչ գիտելիքների մակարդակով չեն համապատասխանում տեխնիկումները, բարձրագույն տեխնիկական դպրոցները և բարձրագույն զբաղումները մտնելու համար կադրեր պատրաստելու խնդիրին:

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԸ վորոշում է.

# 1. ՌԻՍՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատնանշելով, վոր կհետրոնական կտմիտեյի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումից հետո Խորհրդային Ռուսաստանի Լուսժողկոմատի տարրական ու միջնակարգ դպրոցնի ուսման ծրագրերը մանավանդ առաջին աստիճանի ծրագրերը զգալի կերպով բարելավել են, գհտելիքների ծավալով ավելի բարձրացել են, նախորդ տարիների ծրագրերի համեմատ ըստ ուսուցման նյութի դասավորման ավելի սխտեմատիկ են, կենտկոմը գտնում է, վոր նրանք դեռ ևս եյական թերություններ ունին և 5, 6 ու 7-րդ տարիների ծրագրերը պետք է վերամշակման յենթարկվեն:

Ծրագրերի հիմնական թերություններն են. —

ա) Ծրագրի ծանրաբեռնումն ուսման նյութով, վորի հետևանքով մի շարք դիպիպլիններ դպրոցում շտապ են անցնում, յերեխաները գիտելիքները և ունակությունները հաստատապես չեն յուրացնում ու չեն ամրացնում (մաթեմատիկայից-ստերեոմետրիայի բաժինը 7-րդ խմբակում, գրականությունի — սովորողներին անմատչելի գրվածքներ ուսման ծրագրի մեջ մտցնելը և այլն):

բ) Կապակցության անբավարարությունը յեվ միջնել իսկ բացակայությունն առանձին ծրագրերի միջև, մանավանդ մաթեմատիկայի ու գծագրության ծրագրերի միջև, այլ և մաթեմատիկայի, Ֆիզիկայի և քիմիայի ծրագրերի ու աշխատանքի ծրագրի միջև և այլն: (5-րդ տարվա գծագրության ծրագրով պահանջած յերկրաչափական գիտելիքները տրվում են միայն 6-րդ տարում 5, 6 և 7-րդ տարում Ֆիզիկայի ուսուցմասիրությունն ապահովված չի մաթեմատիկական գիտելիքների ծավալով և այլն:)

գ) Մի շարք ծրագրերում սկզբունքային սխալների գոյությունը, ծրագրեր կազմողների հասարակացնող-գեներիկ մոտեցում իրենց խնդրին, Ֆիզիկայի կուրսում արագացման, ուժի և Նյուտոնի որենքների հասկացողության բացակայումը, կենսաբանության կուրսում բջիջի մասին հասկացողության սվաղումը, աշխարհագրության կուրսում քարտեզով կողմնորոշելու բացակայությունը, հասարակապիտության կուրսում քաղաքական առանձին սխալներ):

դ) Հասարակապիսական առարկաների ծրագրերի վերաբերմամբ անբավարար պատմական մտեցում, վոր այդ ծրագրերում չափազանց թույլ պատկերացում է ժողո-

վուրդները և յերկրները պատմական ան-  
ցյալի, մարդկային հասարակութեան զար-  
գացման մասին և այլն:

Եյական թերութիւնն է նաև այն, վոր  
դեռևս մշակված չեն պատմութեան ծրա-  
գրերը:

Իրա համապատասխան՝ կենտկոմն առա-  
ջարկում է.—

1. Խորհրդային Ռուսաստանի Լուստոգիկո-  
մատին՝ մինչև 1933 թ. հունվարի 1-ը  
տարրական և միջնակարգ դպրոցի ծրագրե-  
րը մշակել այնպես, վոր ապահովվի յերե-  
խանները կողմից գիտութիւնները հի-  
մունքների իսկական հաստատուն և սխա-  
տեմատիկ յուրացումը, ուղիղ խոսելու և  
գրելու, մատեմատիկական վարժութիւննե-  
րի և այլ փաստերի ու ունակութիւնների  
իմանալը:

2. Ծրագրերը վերամշակելու ժամանակ  
առաջնորդվել հետևյալով.

ա) Յերկրորդ կոնցենարի խմբակները  
համար մատեմատիկայի, ֆիզիկայի, քիմի-  
այի կենսաբանութեան ծրագրերի ուսման  
նյութի ներքին վերաբաշխում կատարել՝  
այդ ծրագրերի ուսման նյութի ծավալն ու  
ընդլայն լիովին համապատասխան դարձնե-  
լով այդ խմբակներից ամեն մեկի յերեխա-

ների տարիքային առանձնութիւններին:  
Իրա հետ միասին անհրաժեշտ է մասնակի  
կերպով կրճատել յերկրորդ կոնցենարը  
մատեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանու-  
թեան ու քիմիայի ծրագրերն այնպես, վոր  
անպայման կերպով ապահովվեն ամեն մի  
գիտութեան հիմունքների ամուր ու հա-  
տատուն յուրացումն ու ամրապնդումը:

բ) Վերացնել յերկրորդ կոնցենարի մա-  
թեմատիկայի, ֆիզիկայի ու քիմիայի այլև  
պատմութեան, հասարակագիտութեան, գրա-  
կանութեան ու լեզուների ուսման ծրա-  
գրերի միջև յեղած անբավարար կապի  
փաստերը:

գ) Ուսումնական պարապմունքներում  
(վարժութիւններ ուսներենից, մատեմատի-  
կայից, հասարակագիտութեանից և այլն,  
լաբորատորային աշխատանքներ—ֆիզիկա-  
յից, քիմիայից) նկատի ունենալ, վոր ան-  
հրաժեշտ է ոգտագործել սոցիալիստական  
շինարարութեան նյութը, ապահովելով յե-  
րեխաներին մատչելի նյութի խնամքով  
ընտրութիւնը:

դ) Հասարակագիտութեան, լեզվի, գրա-  
կանութեան ու աշխարհագրութեան ծրա-  
գրերում զգալի չափով ուժեղացնել պատ-  
մականութեան տարրերը, այդ զիսցիպլինների

հիմնական բաժիններն ու թեմաները պարզաբանելով փաստական անհրաժեշտ նյութերով, պատմական երգիչներին հարմարեցնելով ու համեմատութիւններով:

յե) Նախատեսնել մաթեմատիկայի ժամերի քանակութեան մեծացումը, մաթեմատիկայի կուրսը տարրական ու միջնակարգ դպրոցում այն ձևով կառուցելով, վորպեսզի ապահովվի պրոֆեսիոնիկական կրթութեան մյուս աստիճանների անցնելը:

զ) Ֆիզիկայի ծրագրերում մտցնել բացակայող ստատիկայի տարրերը, ուժի ու Նյուտոնի որենքների հասկացողութեանը, կենսաբանութեանից բջիջի և որգանիզմի բջիջային կառուցվածքի հասկացողութեանը, քիմիայից՝ անհրաժեշտ է ավելի սիստեմատիկ կերպով կազմել ծրագրերը, վորպեսզի քիմիայի տարրական հասկացողութեանները հաստատուն կերպով յուրացվեն, աշխարհագրութեան ծրագրերը պետք է ապահովվի քարտեզի, մանավանդ Սորհ. Միութեան քարտեզի գրիտենալը, ֆիզիկական աշխարհագրութեան հիմնական հասկացողութեանները, ֆիզիկական, բնական ու անտեսա-աշխարհագրութեան հիմնական ասարբերն՝ ինչպես ամբողջ Սորհ. Միութեան, այնպես էլ յուրաքանչյուր հանրապետութեան, յերկրի ու շրջանի:

Աշխարհագրութեան ուսման ծրագրերում պատշաճ ծավալով պետք է մտցված լինեն և գիտելիքներ կապիտալիստական յերկրներին աշխարհագրութեանից:

ե) Անհրաժեշտ համարել, վոր միջնակարգ դպրոցն ավարտողներից ամեն մեկն իմանա մի ստար լեզու:

ը) Մասնանշելով, վոր չնայած վորոշ չափով բարելավված լինելուն, դեռ ևս անբավարար է մայրենի լեզվի և հասարակագիտութեան դասավանդման և ծրագրերի վիճակը, ՎեկՍՊե-ի (բ) կենտկոմն առաջարկում է Սորհրդային Ռուսաստանի Լուսժողկոմատին, առանձին ուշադրութեան դարձնել այդ առարկաների ծրագրերը մշակելու և նրանց դասավանդումը բարելավելու գործին:

Մայրենի լեզվի ծրագրերը պետք է ապահովի գիտելիքների իսկական սիստեմատիկ, ճիշտ վորոշված շարքի յուրացումը, ինչպես և կանոնալոր կարգալու, գրելու, խոսելու հաստատունակութեաններն, աշակերտների դպրոցական աշխատանքի պրակտիկայի մեջ մտցնելով ինքնուրույն գրավոր աշխատանքներ, քերականական վերլուծութեան և այն՝ թե դասարանում և թե տանը:

թ) Անհրոժեշտ գտնել, վոր հասարակադիտութեան, գրականութեան, լեզվի, աշխարագրութեան, պատմութեան ուսման ծրագրերի մեջ մտցվեն խորհրդային Միութեան ժողովրդների ազգային կուլտուրներին և նրանց գրականութեանը, գեղարվեստին և պատմական զարգացմանը վերաբերող կարևորագույն գիտելիքները, ինչպես և խորհրդային Միութեան տեղագիտութեան տարրերը (ընտելութեան առանձնահատկութիւններ, արդիւնաբերութիւն, գյուղական տնտեսութիւն, սոցիալ-տնտեսական զարգացում և այլն):

ժ) Մեծ նշանակութիւն տալով պոլիտեխնիկական դպրոցում աշխատանքային ուսուցման գործի կազմակերպմանը, անրաժեշտ գտնել աշխատանքի ուսուցման ծրագրերը վերամշակել այնպես, վոր ապահովվի ուսուցման իսկական միացումը արտադրական աշխատանքի հետ, ինչպես և «Թեորիայում և գործնականում արտադրութեան գլխավոր «ճյուղերի» (ՎեկԱՊե-ի (բ) ծրագրերը), ուսուցման սերտութիւնը, ղեկավարվելով Լենինի ցուցմունքներով, թե պոլիտեխնիկական սկզբունքը «չի պահանջում սովորեցնել ամեն ինչ, բայց

պահանջում և սովորեցնել ժամանակակից ինդուստրիայի հիմունքներն առնասարակ» (Լենինի գրութիւնները Համատուտական Կենտրոնի ՎII հրատարակի 1920 թվի սեպտեմբերի 26—27 III նստաշրջանում, Լուսժողկոմատի գեկուցման վերաբերմամբ):

Յեխնելով դրանից, պետք է ապահովել, ինչպես Լենինն և մատնանշել, հետևյալ— «Պոլիտեխնիկական կրթութեան հիմունքները» — «հիմնական հասկացողութիւն ելեքտրականութեան մասին», «ելեքտրականութեան կիրառումը մեխանիկական արդիւնաբերութիւնում», «նույնը քիմական արդիւնաբերութիւնում», «նույնը քիմական արդիւնաբերութիւնում», «նույնը խորհրդային Ռուսաստանն ելեկտրիֆիկացիայի յենթարկելու պլանում», «1-3 անգամից վոշ պակաս» ելեքտրակայանի, գործարանի, սովիտոզի այցելութիւն», «խմանալ գյուղատնտեսութեան այս ինչ հիմունքները» և այլն (մանրամասն մշակել գիտելիքներին անպահպանելով):

Այդ առնչութեամբ և դրա հետ միասին միջնակարգ դպրոցում սովորողներին համար պետք է ապահոված լինի փայտի, մետաղի և այլն մշակելու ունակութիւնները ձեռք բերելը և հիմնական գործիքներին տիրապետելը:

## II. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅԻՆԱՏՆԵՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԳՊՐՈՅԱ- ԿԱՆ ՌԵԺԻՄԻ ԱՄՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Մատնանշել, վոր ուսումնական պարտու-  
մունքները կազմակերպելու վերաբերմամբ՝  
գպրոցում կենտկոմի 1931 թվի սեպտեմ-  
բերի 5-ի վորոշումից հետո մեծ կարգ և  
հաստատված (հաստատուն դասացուցակներ,  
գպրոցական աշխատանքի և ուսումնական  
պարտումունքների ավելի հստակ կազմա-  
կերպում):

Մակայն չնայած այդ վորոշման մեջ  
կենտկոմի արած ցուցմունքին, թե վոչ մի  
մեթոդ չի կարելի ուսուցման հիմնական, ու-  
նիվերսալ մեթոդ ընդունել, այնուամենայ-  
նիվ գպրոցների աշխատանքի պրակտիկա-  
յում, վորպես հիմնական մեթոդ տարածվել  
և այսպես կոչված «լաբորատոր-բրիգադա-  
յին մեթոդ» (մի շարք գպրոցներում գա  
ունիվերսալ և դարձել), վորին ուղեկցել և  
մշտական պարտադիր բրիգադներ կազմա-  
կերպելը, վոր աղավաղումներ և առաջացրել,  
ինչպես՝ անդիմուծելուն ուսումնական աշ-  
խատանքում, ուսուցչի դերի իջեցում, շատ  
դեպքերում յուրաքանչյուր սովորողի ան-  
հատական ուսման անտեսումն:

ՎեկԱՊե-ի (բ) կենտկոմն առաջարկում  
և միութենական հանրապետութունների  
լուստղկումատներին վերացնել լաբորատոր-  
բրիգադային մեթոդի այդ աղավաղումները,  
խսկ ուսման պրոցեսը դպրոցում կազմակեր-  
պել հետևյալ հիմունքներով. —

ա) Տարբական և միջնակարգ գպրոցում  
ուսումնական աշխատանքի կնդմակերպ-  
ման հիմնական ձևը պիտի լինի սովորող  
ների հիմնական ավյալ խմբակի հետ ունե-  
ցած դասը, զբաղմունքների խիստ վորոշա-  
կի դասացուցակով, սովորողների հաստա-  
տուն կազմով: Այդ ձևը պետք է իր մեջ  
պարունակի՝ ուսուցչի ղեկավարությամբ՝  
ընդհանուր խմբակային, բրիգադային և  
յուրաքանչյուր աշակերտի անհատական  
աշխատանքը, գործադրելով ուսուցման բազ-  
մազան մեթոդներ: Ընդամենն պիտի ամեն  
կերպ գարգացնել ուսումնական աշխատան-  
քի կուլեկտիվ ձևերը, չկազմակերպելով մըշ-  
տական պարտադիր բրիգադներ:

բ) Դասատուն պարտավոր է սխտեմա-  
տիկաբար և հետևողականորեն դասավան-  
դել իր դիսցիպլինը, ամեն կերպ սովորեցնե-  
լով յերեխաներին՝ աշխատել դասագրքով,  
գրքով, զանազան տեսակի գրավոր աշխա-

տանճներ կառարել, աշխատել կարինետում, լաբարատորիայում, ուսումնական արհեստանոցում, այդ հիմնական մեթոդների հետ միասին լայնորեն կիրառելով փորձերի, գործիքների զանազան տեսակի ցուցադրումներ, եքսկուրսիաներ, (գործարան, մուզեյ, դաշտ, անտառ և այլն), ընդամենն դասատուն պիտի ամեն կերպ աջակցի յերեխաներին ուսումնական պարավաններին ընթացքում հանդիպած դժվարությունների զեպքում: Պետք է յերեխաներին սխտեմատիկաբար սովորեցնել, ինքնուրույն աշխատանքի, լայնորեն գործադրելով զանազան առաջադրություններ տալը՝ գիտելիքների վորոշ դասընթացի տիրապետելու չափով (խնդիրների լուծում, վարժություններ, մոդելներ պատրաստել, աշխատանք լաբարատորիաներում, հերբարիումներ ժողովել, մերձդպրոցական հողամասերի ոգտագործում՝ ուսումնական նպատակներով և այլն):

Կենտրոնը պարտավորեցնում է լուսժողկոմատներին և նրանց որդաններին՝ դպրոցի ամբողջ ուսումնական աշխատանքում անպայման սպասողիկ դասավանդող անձնակազմի ղեկավար զերը:

գ) Ի պրոցական աշխատանքի հաշվառման հիմքում պետք է դրված լինի աշա-

կերտների զիտության ընթացիկ, անհատական, սխտեմատիկ կերպով տարվող հաշվառումը: Դասատուն պետք է ուսման աշխատանքի ընթացքում ուշադրություն մատնասիրի ամեն մի աշակերտի: Մյուս ուսմանասիրություն հիման վրա դասատուն պարտավոր է յուրաքանչյուր յեռամայակի վերջը կազմել տվյալ առարկայի վերաբերմամբ ամեն մի աշակերտի առաջադիմությունից ընդթագծերը: Արգելել հաշվառի ու հաշվետվություն ամեն տեսակի բարդ սխեմաներն ու ձևերը:

Սներաժեշտ գտնել տարվա վերջին ստուգողական ըննություն սահմանել բոլոր աշակերտների համար:

դ) Առաջարկել Լուսժողկոմատին, ըստ առանձին ղիսցիպլինների, ինչպես և ուսումնադաստիարակչական աշխատանքի առանձին տեսակների համար (որինակ՝ լաբարատորիայում, արտադրությունում, մերձդպրոցային հողամասում) շտապ կերպով մեթոդիկա մշակել համաձայն աշակերտների հասակային առանձնահատկությունների:

յե) Մի շարք դեպքերում դպրոցի վարչությունը և մանկավարժները բավականաչափ ուշադրություն չեն դարձնում դպրոցում կարգը խախտելու վրա, նախաձեռնություն

չեն ցույց տալիս աշակերտներէ դիտակցա-  
կան դիսցիպլինան ամբողջելու համար:  
Այդ ի նկատի ունենալով պարտավորեցնել  
դպրոցներէ վարիչներին և մանկավարժնե-  
րին՝ դաստիարակչական համառ աշխատանք  
տանել, պայքարելով աշակերտներէ այն  
արարքներէ դեմ, վորոնչ խախտում են  
դպրոցի կարգապահութիւնը, այդ գործին  
քաշելով հասարակական կազմակերպու-  
թիւններին— ծնողներին, կոմյերիտական  
և պիոներական կազմակերպութիւններին,  
իսկ սովորողներէց անկարգներին, խուլի-  
զանութիւն անողներին, ուսուցչական  
կազմը վերավորողներին, դպրոցի վարչու-  
թյան և մանկավարժներէ կարգադրութիւն-  
ները խախտողներին, դպրոցական ռեժիմը  
բեկանողներին, դպրոցի գույքը փչացնողնե-  
րին կամ գողացողներին դպրոցից արձակել՝  
առանց նորից դպրոց մտնելու իրավունքի՝  
մեկից մինչև յերեք տարի ժամկետով:

դ) Առաջարկել լուսօրդկոմատներին՝  
մանկավարժական սիստեմատիկ պրոպա-  
գանդի մի շարք միջոցառումներ մշակել,  
անհապաղ ձեռնարկելով ծնողներէ համար  
մասշնիի մանկավարժական գրականութիւն  
կազմելուն և հրատարակելուն:

ե) Դպրոցում մանկավարժական աշխո-

տանքի արդյունավորութիւնը բարձրացնե-  
լու նպատակով և նկատի առնելով թե ինչ-  
պիսի խոշորագույն նշանակութիւն ունի  
դրա համար ուսուցչական աշխատանքի  
այնպիսի անհրաժեշտ պիտույքների մատա-  
կարարումը դպրոցին՝ ինչպիսին են ուսում-  
նական պիտույքները, կարխնետների ու-  
սումնական ապարատուրան, արհեստանոց-  
ների ուսումնաւարտադրական սարքավո-  
րումն ու դպրոցական մյուս տեսակի պի-  
տույքները, յերկու ամսում մշակել տարրա-  
կան և միջնակարգ դպրոցների համար ուս-  
ման պարագաներ արտադրելու և (քարտեզ-  
ներ, գլոբուսներ, դիտողական աղյուսակներ  
և այլն), բնագիտական և ֆիզիկամատեմա-  
տիկական կարխնետներէ համար— ուսում-  
նական ապարատուրա, ինչպես և մշակել  
աշխատանքի սենյակները ու դպրոցական  
արհեստանոցները համապատասխան ստա-  
նդակներով, գործիքներով և նյութերով ստան-  
դարտային սարքավորման պլանը, պոլի-  
տեխնիկական դպրոց կազմակերպելու հա-  
մար՝ պատշաճ ուսումնական բազա ստեղ-  
ծելու նպատակով:

Այդ պարագաների արտադրութիւնն ըն-  
դարձակելու ու նրանցով դպրոցների մա-  
տակարարումը բարելավելու պլանը պետք



ե մշակվի այն հաշիվով, վոր արդեն 1932-33 ուս. տարում նշանավոր չափերով բարձրանա ամբողջ դպրոցական աշխատանքի նյութական ուսուսմանական բազան:

### III. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Մատնանշելով վերջին տարիների ընթացքում ուսուցչի ակտիվության բավականաչափ աճումը, աշխատանքի համար նրա պատասխանատվության բարձրացումը, ՎեկԱՊե-ի (բ) Կենտկոմը շեշտում է ուսուցչի շարունակ աճող դերը յերեխաներին դիտության հիմունքները սովորեցնելու և նրանցում զիտակցական զիսցիպլինա և դեպի ուսուսմն աշխատանքը կոմունիստական վերաբերմունքը դաստիարակելու գործում:

ՎեկԱՊե-ի (բ) Կենտկոմը պարտավորեցնում է միութենական հանրապետությունների լուսժողովմատներին, խորհրդային ու կուսակցական որդաններին՝ ուսուցչի համար ամեն կերպ անհրաժեշտ պայմաններ ապահովել իր աշխատանքում, վորպեսզի նա հաջողությամբ կատարի Մոցիալիստական Սորերդային Հանրապետությունների Միության յերիտասարդ սերունդը սովորեցնելու և դաստիարակելու իր պա-

տասխանատու ու պատվավոր պարտակա-նությունները: Միսանմատիկ աշխատանքն ուսուցչի դողափարական-քաղաքական մակարդակը, ընդհանուր կրթությունն ու մանկավարժական վարպետությունը բարձրացնելու համար, Կենտկոմի և Սորերդային Միության ժողովոմխորհի հրահանգներին անպայման ու ճշտիվ իրագործումը, վորոնցով ուսուցիչները մթերքներով և արդունաբերության ապրանքներով մատակարարվելու կողմից հավասարեցվում են արդունաբերական բանվորին, աշխատավարձի ժամանակին վճարումը, ուսուցչի բնակարանի, ընտանիքի և հանգստյան մասին հոգածությունը և ուշադիր վերաբերմունքը դեպի նրա աուրյա կարիքները, — այս բոլորը պետք է ընորոշեն խորհրդային և կուսակցական որդաններին կողմից՝ ուսուցչին լենինիյան վերաբերմունք ցույց տալու մասին կուսակցության աված հրահանգների իսկական իրագործումը:

2) Լուսժողովմատը պետք է ուսուցիչներ տեղափոխելու և նշանակելու ճիշտ կարգ սահմանի և տեղերում կադերն այնպես դասավորի, վորն ապահովի փորձված ուսուցիչների ճիշտ ոգտագործումն աշխատանքում, ինչպես և նրանց կողմից սխտեմա-

տիկ ոգնությունը յերիտասարգ ուսուցչական կադրերին:

Առաջարկել անդական որդաններին, դպրոցական պարագմունքների և դրանց համար նախապատրաստելու ժամանակ (նախապատրաստություն դասերի համար, ինքնակրթություն, մասնակցություն կուրսերին, մեթոդական խորհրդակցություններին և այլն), ուսուցչին չկտրել հասարակական աշխատանքների համար: Կտրուկ կերպով արգելել դյուելիտորիդի, ռայգործկոմի և այլն աշխատանքներին վերաբերող զանազան տեխնիկական հանձնարարություններ կատարելու համար ուսուցիչներին ոգտագործելը:

3) Անհրաժեշտ գտնել ուսուցիչների յերեկաններին բանվորների հետ հավասարապես ընդունել տեխնիկում, բարձրագույն դպրոց և բարձրագույն տեխնիկական դպրոց:

4) Առաջարկել միացյալ պետհատին մինչև 1933 թվի հունվարի 1-ը կազմակերպել գիտելիքների առանձին ճյուղերին և մանկավարժական հարցերին վերաբերող, մատչելի գներով ուսուցիչներին ավելի անհրաժեշտ գրքեր ընտրելու և ուղարկելու գործը:

Լուսժողկոմատը գիրք ծախող կազմակերպությունների հետ միասին պետք է մի ամսում ուսուցիչների համար գրքեր գնելու և ստանալու արտոնյալ պայմաններ հրատարակի:

5) Լուսժողկոմատը պետք է միջոցներ ձեռք առնի, վոր ամենակարճ ժամանակամիջոցում պատշաճ կերպով գնի մանկավարժական կրթության և ուսուցիչների հեռակա ուսուցման գործը, առանձին ուշադրություն դարձնելով ուսուցիչների կողմից մեթոդիկային և մանկավարժական աշխատանքի գործիքներին տիրապետելու (պարագաները, պրիբորները, քարտեզները, դիտողական աղյուսակները, կինոները, ռագիոն և այլն ուսուցման համար խելացի կերպով ոգտագործելը):

Ամեն կերպ ընդլայնել աշխատանքի լավագույն որինակների համար ուսուցիչներին խրախուսելն ու պոեմիա տալը, ինչպես և ղեկավարության մեջ առաջավոր դպրոցների և ուսուցիչների նվաճումների հաշվառումն ու ոգտագործումը:

«Մինչև 17 տարեկան բոլոր յերկսես յերեկանների համար ձրի ու պարատիր ընդհանուր և պոլիտեխնիկական կրթությունը (վոր տեոականում և գործնականում

ծանոթացնում եւ արտադրութեան գլխավոր ճյուղերի հետ) կիրառելու մասին» (ՎեկԱ-ՊԵ-ի (բ) ծրագիրը) կուսակցութեան ծրագրերն իրականացնելու համար, ինչպես եւ միջնակարգ դպրոցի աշակերտների ընդհանուր-կրթական եւ պոլիտեխնիկական նախապատրաստութեանն արագորեն բարձրացնելու, բարձրագույն դպրոցի համար պատրաստված կոնտինգենտն ընդլայնելու միջնակարգ եւ բարձրագույն դպրոցների հասակային անհամապատասխանութեանը վերացնելու համար 1932-33 ուսումնական տարվանից սկսած ձեռնարկել յոթնամյա պոլիտեխնիկական դպրոցը տասնամյակի վերակազմելուն:

Յելնելով դրանից, առաջարկել Սորհրդային Միութեան ժողովրդին, վոր մի ամսում առաջիկա ուսումնական տարում յոթնամյա դպրոցում ութերորդ խմբակ կազմակերպելու կոնկրետ պլանն ու չափերը հաստատի, վորպէս տասնամյա դպրոցին անցնելու առաջին քայլ:

ՎԵԿԱՊԵ-ի (բ) կեցեօով

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻՆ ԲՈԼՇԵՎԿԻԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի այսոր հրապարակվող վորոշումը դպրոցի մասին՝ հասարակա-քաղաքական եւ կուլտուրական խորարդուն շնանակութեան ունի: Նա արդշունք եւ կուսակցութեան եւ նրա Կենտկոմի կողմից դպրոցական այն ղեկավարի եւ ծրագրերի խորն ստուգման, վորոնցով աշխատում եւ դպրոցը:

Կենտկոմն ամբողջ կուսակցութեան ուշադրութեանը կենտրոնացնում եւ Սորհրդային Միութեան աճող սերնդի կոմունիստական դաստիարակութեան եւ կրթութեան արմատական հարցերի վրա:

Դեռևս 1930 թվի հուլիսի 25-ին Կենտկոմը հանեց իր պատմական վորոշումը ընդհանուր եւ պարտադիր նախնական ուսման մասին:

Մենք համարձակորեն կարող ենք սակել, վոր հաջողութեամբ իրականացրել ենք այդ խնդիրը եւ այդպիսով մեծագույն հաղթանակ ենք տարել: Տարրական դպրոցը Սորհրդային Միութեանում, բացառութեամբ Հյուսիսի ամենահեռավոր ժողովրդների, պարտադիր եւ դարձել բոլոր յերիխանների հաճա-

խելու համար: Միայն տարրական դպրոց  
սխ. սեպտեմբերի 1-ից հաճախելու յե թոր-  
հրդային Միութեան 20 միլիոն յերեխա:  
Սոցիալիզմի հաղթանակող յերկրի այս  
հաջողութեաները կատարվում են կապի-  
տալիստական հասարակութեան խորն կուլ-  
տուրական անկման ֆոնի վրայ, վորը վառ  
արտահայտվում է ուսուցիչներին և դպրոց-  
ների քանակի ամենատուր կրճատումով:  
Թորհրդային Միութեան և ամբողջ աշխարհի  
աշխատավորութունը պետք է իմանան,  
վոր նույնիսկ Հ. Ա. Մ. Ն., այդ հարստագույն  
կապիտալիստական յերկրում, ներկայումս  
10 տարեկանից բարձր 4 միլիոնից ավել  
յերեխաներ կան բոլորովին անզրագետ:

Յերկրորդ վարժուստը դպրոցի մասին կենտ-  
կումը հանել է անցյալ տարի սեպտեմբերի  
5-ին: Նա շրջադարձային կեա եր հանդիսա-  
նում մեր դպրոցի կյանքում: Կենտկոմի  
սեպտեմբերյան վորոշումը դրսևորեց դպրոցի  
արմատական թերութունը, վորը կայա-  
ում է նրանում, վոր «... ուսուցումը  
դպրոցում հանրակրթական գիտելիքներին  
գոհացուցիչ ծավալը չի տալիս և անբավա-  
րար է լուծում տեխնիկոմներին և բար-  
ձրագույն դպրոցներին լիովին զրագետ,  
գիտութունների հիմունքներին (ֆիզիկա,

քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու,  
աշխարհագրութուն և այլն) տիրապետող  
մարզիկ պատրաստելու խնդիրը»:

Այս վստուշումը մորթիլիզացիայի և յեն-  
թարկել կուսակցական և խորհրդային կադ-  
մակերպութունների ուշադրութունը դպրո-  
ցի վորակի համար պայքարի շուրջը, դպրո-  
ցական բնագավառում յենինյան քաղաքա-  
կանութեան կոպտագույն աղավաղումներին,  
դպրոցը դեպի հեա քաշող ալ ոպորտունիզմի  
և «ձախ» վուլգարիզատորութեան դեմ պայ-  
քարի շուրջը, վորն ըստ եյութեան դպրոցի  
վերացում եր նշանակում:

Սակայն անցած տարվա վորձը ցույց  
տվեց, վոր կենտկոմի դրած խնդիրը դեռ չի  
լուծված, դպրոցի արմատական թերու-  
թունը մինչև վերջ դեռ չի վերացվել և վոր  
կենտկոմի անցյալ տարվա վորոշման համա-  
ձայն վերաձաղված ուսման ծրագրում դեռ  
կան մի շարք եյական թերութուններ, վո-  
րոնք դժվարացում են կենտկոմի կողմից  
դպրոցի առաջ դրված խնդիրներին իրագոր-  
ծումը և վորոնք խանգարում են դպրոցի  
աշխատանքի վորակի բարձրացմանը:

Կենտկոմի այսուր հրապարակվող վորո-  
շումը բոլոր դպրոցներին, ժողկրթութուն  
բոլոր բաժիններին, բոլոր կուսակցական և

խորհրդային կազմակերպութիւններին գործողութեան մարտական ծրագիր եւ տալիս խորհրդային դպրոցը յերկրորդ հնգամյակի հսկայական պահանջները մակարդակի վրա դնելու համար, — այն հնգամյակի, վորը պետք եւ անգասակարգ սոցիալիստական հասարակութիւն կառուցի:

Վորոշման մեջ տրվում եւ տարրական և միջնակարգ դպրոցների գոյութիւն ունեցող ծրագրերի թերութիւնների սպառնցուցիչ քննադատութիւնը և ճիշտ ու կոնկրետ կերպով ցույց եւ տրվում, թե ծրագրերի վերամշակումը ինչ ուղղութեամբ պետք եւ կատարվի: Այն կենտրոնական գաղափարը, վորի շուրջը պետք եւ կենտրոնացնել ժողովրդական կրթութեան որգանները ուշադրութիւնը՝ ծրագրային աշխատանքի մեջ, — գա այն եւ, վոր պետք եւ ապահովել յերեսնամեայ բարձր բնդիանուր կրթութեամբ, գիտելիքներ սխտեսմասիկորեն ավանդել, յեվ բերեցիկ գիտելիքներ կապել կյանքի, պայքարի յեվ սոցիալիստական շինարարութեան հետ:

Վորոշման մեջ տրվում եւ մի շարք կոնկրետ ցուցմունքներ՝ կարևորագույն դիտարկումների ծրագրի վերաբերյալ: Մայրենի լեզվի ծրագիրը — ասվում եւ վորոշման մեջ — պետք եւ ապահովել գիտելիքների իսկական

խտեմատիկ և ճշտիվ վորոշված պիտելիքների լիովին յուրացումը, ալ և ճիշտ գրելու, կարգալու և ընթացող խոսքի ունակութիւններ ալը սովորողները ուսումնական աշխատանքի պարծնականում մտցնելով ինքնորույն գրավոր աշխատանքներ, քերականական վերլուծումներ և այլն, թե դասարանում և թե տան համար:

Վորոշումն առաջարկում եւ հասարակագիտութեան, գրականութեան, լեզվի, աշխարհագրութեան և պատմութեան ուսման իմնական ծրագրերի մեջ մտցնել խորհրդային Միութեան ժողովուրդների ազգային կուլտուրաներին վերաբերող կարևորագույն գիտելիքները: Դպրոցում ինքնյան ազգային ճիշտ քաղաքականութիւնը տանելու համար, դա հսկայական նշանակութիւն ունի:

Վորոշումը կանգ եւ առնում դպրոցական աշխատանքի մեթոդների և ամբողջապես դպրոցական ուսումի վրա: Նրա մեջ ասվում եւ «... չնայած կենտրոնի ցուցմունքին... թե վոչ մի մեթոդ չի կարող ուսման հիմնական և ունիվերսալ մեթոդ համարվել դպրոցների աշխատանքի պարծնականում իբրև հիմնական մեթոդ, տարածված եւ այսպես կոչված «լաբարա-

տոր-բրիգադային մեթոդը» (մի շաբաթ դպրոցներում նա ունիվերսալ և դառել), վորն ուղեկցվել և մշտական և պարտադիր բրիգադաների կազմակերպումով և ուսումնական աշխատանքը դիմադրկուլթյան կարգով ազավադման և յինթարկել, իջեցրել և ուսուցչի դերը և շատ դեպքերում անտեսել և յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսուցումը:

Վեկս.Պե-ի (բ) Կենտկոմն առանջարկում և միութենական հանրապետություններ լուսժողկոմատներին վերացնել «լաբարատոր-բրիգադային մեթոդի» այդ ազավադումները...»:

Սա նշանակում է, վոր դպրոցը մի ամբողջ շաբաթ դեպքերում մինչև վերջ չի վերացրել մեթոդական պրոֆեկտորության ելմաննաները, վոր մատնանշվել և Կենտկոմի սեպտեմբերյան վորոշման կողմից: Մամուլի մեջ արդեն հայտարարված է, վոր լաբարատոր-բրիգադային մեթոդի կիրառման մեջ այդ ազավադումներն իրենց արտացոլումն են ունեցել և Ռ. Ս. Ֆ. Ն. Լուսժողկոմատի ղեկավար ղոկումենտներին մեջ:

Պետք է ամուր հարվածել ուսուցման մեթոդների մեջ բոլոր ազավադումներին, իսկ մտնկավարժական պրոցեսը կազմա-

կերպել ամբողջապես Կենտկոմի ցուցմունքներին համապատասխան:

Ուսուցչի առաջատար դերի ամեն կերպ ամբացնելը, դասի կազմակերպումը և նրա մեջ դպրոցական ուսուցման մեթոդների ամբողջ բազմազանության կիրառումը, յուրաքանչյուր սովորողի դիտելիքների անհատական և սիստեմատիկ հաշվառումը, սովորողների համար տարվա վերջը ստույգողական քննություններ կազմակերպելը, — ահա ուսումնական պրոցեսի կազմակերպման հիմուքները դպրոցում:

Սուսքը դպրոցի ամբողջ աշխատանքի մեջ դիմադրկուլթյունը վերացնելու, դասատվի և սովորողների պատասխանատվությունն իրենց աշխատանքի համար բարձրացնելու մասին է:

Կենտկոմը սլարտավորեցնում է Լուսժողկոմատի որդաններին «դպրոցական ամբողջ ուսումնական աշխատանքի մեջ անպայման ապահովել դասատվական կազմի ղեկավար դերը»: Կենտկոմի այս ցուցմունքները պետք է դպրոցի ամբողջ աշխատանքի մեջ անհապաղորեն իրականան:

Կենտկոմը բացառիկ ուշադրություն և դարձնում դպրոցում կարգ ու կանոն սահմանելու վրա: Կենտկոմը սլարտավորեցնում

և դպրոցների վարիչներին և մանկավարժ-  
ներին «համառ դասխարակական աշխա-  
տանք սանել, պայտարելով դպրոցում կարգը  
խախտող աշակերտի արարների դեմ յեվ այդ  
գործին գրավելով հասարակական կազմա-  
կերպություններին, ծնողներին, կամյերիսական  
յեվ պիտներական կազմակերպություններին,  
խակ աշակերտներից անկարգներին, խուլիգա-  
նուրյուն անողներին յեվ ուսուցանող անձնա-  
կազմին վիրավորողներին, դպրոցի վարչության  
յեվ մանկավարժների կարգադրությունները  
խախտողներին յեվ դպրոցական ռեժիմը բե-  
կանողներին, դպրոցի գույրը փչացնողներին  
յեվ գողացողներին—հետացնել դպրոցից,  
առանց դպրոց մտնելու իրավունքի, մեկից  
մինչեվ յեռեք տարի ժամկետով»:

Պետք է յուրաքանչյուր ուսուցիչ և  
դպրոցի յուրաքանչյուր վարիչ հասկանա,  
վոր առանց գիտակցական գիտցելիքնայի,  
հաստատուն կարգ ու կանոնի դպրոցում չի  
կարելի գիտակից, գիտցելիքնայի հեղափոխա-  
կան, և համաշխարհային պրոլետարական  
հեղափոխութեան համար մարտիկ դաստիա-  
ր ակել:

Վորոշումը ընդգծում է սովորողների,  
ինչպես անհատական, այնպես ել կողմիկտիվ  
ինքնուրույն աշխատանքի նշանակութունը:

Դպրոցական աշխատանքում թեորիայի և  
պրակտիկայի կապի ուժեղացման նպատա-  
կով «պետք է յերեխաներին սխտեմատիկ  
կերպով վարժեցնել ինքնուրույն աշխա-  
տանքի, յուրացնելու չափ լայն կիրառելով  
զանազան առաջադրութուններ, գիտելիք-  
ների վորոշ դասընթացից (ինդիվիդուալ  
լուծումն ու վարժութուն, մոդելների պատ-  
րաստումն, աշխատանք լաբորատորիայում,  
հավաքել հերթաբերումներ, ուսումնական  
նպատկներով ոգտագործել դպրոցական հողա  
մասերը և այլն):

Ցնշելով այն բանից, վոր գիտելիքների  
յուրացման վորակը և սոցիալիզմի համար  
նախաձեռնող շինարարների դաստիարակու-  
թյունն ապահովող՝ աշխատանքի ճիշտ  
մեթոդները կախված են առաջին հերթին  
ուսուցչից, կենտկումը «պարտավորեցնում է  
միութենական հանրապետութունների լուս-  
ժողովմամաներին, խորհրդային և կուսակ-  
ցական որդաններին ամեն կերպ ապահովել  
ուսուցչի համար իր աշխատանքի մեջ անհրա-  
ժեշտ պայմաններ, վորպեսզի նա կարողանա  
հաջողութեամբ կատարել Սորհրդային Միու-  
թյան յերիտասարդ սերնդին կրթելու և  
դաստիարակելու պատասխանատու և պատ-  
վավոր պարտականութունները: Ուսուցչի

ընդհանուր կրթութեան, զազափարտկանքադաքական մակարդակի և մանկավարժական փորձի բարձրացման վրա սիստեմատիկ աշխատանքը, նրան միջերջներով և առդյու-նաբերական ապրանքներով մատակարարելու մեջ արդունարեւական բանվորին հավասարեցնելու մասին Կենտկոմի և Պոր-հրդային Միութեան ժողկոմխորհի ղեկնկ-տիվների անպայման ու ճշգրիտ կատարելը, աշխատավարձի ժամանակին տալը, բնա-կարանի, ընտանիքի և ուսուցչի հոնգստի մասին հոգալը, նրա ամենորոյա կարիքներին ուշադիր վերաբերվելը,— այս բոլորը պետք է բնորոշեն խորհրդային և կուսակցական որգանների կողմից կուսակցութեան ղեկնկ-տիվների իսկական կատարումը՝ ուսուցչին լեւինյան վերաբերմունք ցուցց տալու մասին:

Տարրական և միջնակարգ դպրոցի հետա-գա բարելավման գործնական ծրագիրը վորո-շելով, Կենտկոմի վորոշումը նորամուծու-թյուն և մտցնում դպրոցական կրթութեան սիստեմի մեջ:

Յոթնամյա պոլիտեխնիկական դպրոցի վրա ութերորդ խմբեր կազմակերպելով մենք մոտենում ենք մեր կուսակցութեան ծրագրի լրիվ գործնական իրականացմանը— մինչև 17 տարեկան բոլոր յերիտասարգիների հա-

մար պոլիտեխնիկական դպրոց ունենալու մասին: Դա հնարավորութեան կտա ընդլայ-նելու բարձր դպրոցի համար պատրաստվե-լիք կոնտինգենտի պատրաստականութեանը և վերացնելու միջնակարգ և բարձրագույն կրթութեան միջև յեղած անհամապատաս-խանութեանը:

Այն ժամանակ յերբ մեր յերկիրը վերջ-նականապես հաստատվել է իր զարգացման սոցիալիստական ուղու վրա, յերբ գյուղա-կան տնտեսութեանը մեծամասնութեանը համախմբվել է կոլխոզների մեջ, յերբ կուլակութեանն իբրև դասակարգ կարեւո-րագույն հացահատիկային ռալոններում վերացվել է, յերբ յերկրի ամբողջ տնտեսու-թյունը սոցիալիստական տեմպերով վերա-կառուցվում է և յերբ ընկ. Ստալինի տեխ-նիկային տիրապետելու մասին լոզունգն իր ամբողջ սրութեամբ կանգնած է մեր առաջ, — մեր դպրոցի աշխատանքի վորակն իբրև կադրերի պատրաստման և մասսաների կուլտուրական վերելքի հզոր գործոն, բա-ցատիկ նշանակութեան և ստանում:

Մի քանի որից հետո Պորհրդային Միու-թեան բոլոր տարրական և միջնա կարգ զբա-լրոցներում սկսվում են պարապմունքները:



1932-33 ուսումնական տարին, վոր  
դուզադիպում ե առաջին հնգամյակի ավարտ-  
ման և յերկրորդի սկզբի հետ, պետք ե  
անցնի դպրոցի մասին կենտկոմի վորոշման  
լրիվ իրականացման նշանաբանի տակ:

Կենտկոմի վորոշումը կոնկրետ ղեկա-  
վարութեան նմուշ ե հանդիսանում. այդ  
որինակի վրա կուսակցական կազմակեր-  
պութեանները պետք ե և պարտավոր են  
սովորել, թե ինչպիս պետք ե ղեկավարել  
դպրոցի աշխատանքը:

Կենտկոմի ղեկավարութեամբ առաջիկա  
ուսումնական տարում կոմունիստական  
լուսավորութեան ֆրոնտում կուսակցու-  
թեանը ձեռք կբերի նոր վճռական հաջո-  
ղութեաններ:

**Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՒԼԵ-  
ԳԻԱՅԻ 1932 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
ՎՈՐՈՇՈՒՄԸ՝**

**ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ**  
1932 թվի ոգոսոսի 25-ի

**«ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԵՊ-  
ՐՈՑՆԵՐԻ ՌԻՍՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅԵՎ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՆԱԾ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԱՆՐԱԳԻ-  
ՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ի լրումն ՎԵԿԱՊԵ-ի (բ) կենտկոմի ո-  
գոսոսի 25-ի վորոշման հանրազիտացման  
համար անցկացրած միջոցառումների կատա-  
րել հետևյալը:

1. Սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմ-  
բերի 5-ը յուրաքանչյուր դպրոցի մանկա-  
վարժական ժողովում մշակել կենտկոմի վո-  
րոշումները: Ձեկուցողների հարցը համա-  
ձայնեցնել ուսյուսըաժվարների հետ:

2. Հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի  
10-ը վորոշումն անցկացնել բոլոր դպրոց-

ների սովորողներին ակտիվով կոմյերիտներին և պիոներ կոլեկտիվին հետ միասին:

2. Եկուցող խնդրել Ա. Լ. Կ. Յե. Մ-ի ռայ-կոմիտեից:

3. Հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 20-ը բոլոր դպրոցներում և յուրաքանչյուր խմբակում հասարակագիտության դասերին կազմակերպել 2-3 զրույց ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի վորոշման մասին:

4. Հոկտեմբերի 1—10 ժամանակամիջոցում յուրաքանչյուր դպրոցում հրավիրել ծնողական ժողով և քննել ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի վորոշումը: Զեկուցողների հարցը համաձայնեցնել ռայլուսբաթիկներին հետ:

5. Ազրկոմիկուսի (բ) ռայկոմիների հետ միասին լաջնորեն ոգտագործել բոլոր քաղ-լուսահիմնարկները (ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ, ուղիտ, կիտո և այլն) և ներգրավելով բանվորներին, կոլտոշնիկներին և բոլոր աշխատավորներին գեկուցումներին, զրույցներին, յերեկույթներին, պատի թերթի և այլն միջոցով բացատրել ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի վորոշումը:

6. Յուրաքանչյուր ռայլուսբաթի և դպրոցի—կազմել ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի

նպատակի 25-ի վորոշման իրականացման աշխատանքի կոնկրետ պլանը:

7. Ռայլուսբաթավարների պատասխանատվությամբ յուրաքանչյուր ուսուցչին ապահովել Լուսժողկոմատի «Իրագործենք ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի ոգոստոսի 25-ի վորոշումը դպրոցի մասին» ժողովածով:

8. ՎեհԱՊԵ-ի (բ) Կենտկոմի ոգոստոսի 25-ի վորոշման հանրագիտացման համար վերոհիշյալ միջոցառումները կիրառելու անձնական պատասխանատվությունը ընկնում և ռայլուսբաթավարների վրա:

9. Ռայլուսբաթավարները մինչև հոկտեմբերի 20-ը պետք և գրավոր տեղեկագիր ներկայացնեն կատարած աշխատանքի համար, ցույց տալով ռայլուսբաթիկների կողմից նշված միջոցառումներն ու փաստերը:

Ա. Ս. Խ. Լ. Լուսժողկոմ—

Մ. ՇԱԽԲԱԶՈՎ

023

« Ազգային գրադարան



NL0228027

40 kopy.

44. 411

**YIQ(V)F MQ-nin 25 avqust 1932-çi il  
məktəv haqqındakь qərarьnьn  
həyata keçirilməsi uoğrunda  
(Mə'ruzəcilər ycyn materiallar)**

**Azərnəşr - 1932**